ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/34» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 11 դեկտեմբերի 2019թ.

ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վիլեն Գիշյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Նելլի Աբովյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Հայկ Հովհաննիսյան, Ասատուր Ասատրյան

1. **«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/34» ծածկագրով ընթացակարգի NN 1,2 չափաբաժինների մասով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման մասին.**

1.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/34» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնման ընթացակարգի հրավերը և հայտարարությունը 02.12.2019թ. հրապարակվել է www.apmeps.am կայքում, ինչպես նաև www.gnumner.am կայքում:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել են 2019 թվականի դեկտեմբերի 09-ին, ժամը՝ 12:00-ին apmeps համակարգի միջոցով: ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար 2019թ.-ի ընթացքում կենցաղային տեխնիկայի ձեռքբերման նպատակով՝ գնանշման հարցման միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/34» ծածկագրով ընթացակարգի 09 դեկտեմբերի ժամը՝ 12:00-ի բացման նիստում հանձնաժողովը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետով, թիվ 2 արձանագրությամբ որոշեց՝ NN 1,2 չափաբաժինների մասով նիստը կասեցնել և «ԱՅ ԹԻ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ին, «ՆՈՎԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ին և «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

1.3 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/34» ծածկագրով գնանշման հարցման ձևով ընթացակարգի միաժամանակյա բանակցությունների նիստը տեղի պետք է ունենար 11.12.2019 թվականին ժամը 12:00-ին, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության մասնաշենքում՝ ք.Երևան, Արշակունյաց-63 հասցեում: «ԱՅ ԹԻ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ի, «ՆՈՎԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի և «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները չեն ներկայացել միաժամանակյա բանակցություններին և չեն կատարել գների նվազեցում:

2. ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար 2019թ.-ի ընթացքում կենցաղային տեխնիկայի ձեռքբերման նպատակով, գնանշման հարցման միջոցով,էլեկտրոնային եղանակով կազմակերպած «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/34» ծածկագրով ընթացակարգի NN 1,2 չափաբաժինների գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝

2.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/34» ծածկագրով գնման ընթացակարգի՝

N 1 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՅ ԹԻ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ին,

N 2 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ -ին,

որոնց գնային առաջարկները չեն գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

2.2 Ծանուցել ԱՅ ԹԻ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ին և «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

2.3 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/34» ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ, քան առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից, հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում, ՔԿ ծառայության մասնաշենքում, որը գտնվում է Արշակունյաց 63 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հաձնաժողովի

Նախագահ՝ ---------- Վ. Գիշյան

Գնահատող անդամներ

1 ---------- Հ. Հովհաննիսյան

2 ---------- Ա. Ասատրյան

Քարտուղար՝ ---------- Ն.Աբովյան